

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2019ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020թվականի փետրվարի 4-ին ժամը 14:00-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի 2019թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ համայնքի ղեկավարի ներկայացրած հաշվետու ժողովից:

Մասնակցությամբ՝ Արմավիրի մարզպետարանի հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանման գործունեության համակարգման բաժնի պետ Գևորգ Գևորգյանի, համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունների աշխատակիցների, ավագանու անդամների և համայնքի թվով 120 քնակիչների:

2019թվականի ընթացքում Մյասնիկյան համայնքում կայացվել է 6 հերթական և 7 արտահերթ ավագանու նիստեր, որի ընթացքում ավագանին կայացրել է 92 որոշում:

Համայնքի ղեկավարը 2019 թվականի ընթացքում ընդունել է 88 որոշում և արձակել 39 կարգադրություն: Համայնքապետարան է մուտք եղել 250 գրություն և առաքվել 317 գրություն:

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով բյուջեի կատարողականի և հնգամյա զարգացման ծրագրի կատարողականի վերաբերյալ տրվել է 2018թվականի հաշվետվություն և տեղադրվել համայնքապետարանի պաշտոնական կայքում և azdarar.am-ում:

2019թվականի դեկտեմբերի 26-ին համայնքապետարանում կայացել է համայնքային ծառայության առաջատար մասնագետի պաշտոնի մրցույթ:

2019թվականի ընթացքում համայնքի բյուջեից 46977.0 հազար դրամ գումար հատկացվել է օրենսդիր և գործադիր մարմինների աշխատանքները իրականացնելու համար.

- 15848.0 հազար դրամ գումար է հատկացվել «Մյասնիկյանի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության պահպանման և սպասարկման համար,
- 2500.0 հազար դրամ գումար է հատկացվել «Երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության պահպանման և սպասարկման համար,
- Համայնքի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 14.457.9 հազար դրամ, ֆոնդային բյուջեի մնացորդը՝ 5.399.5 հազար դրամ.

- 2019թվականի փետրվարին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացավ համայնքի «Մշակույթի տան տանիքի վերակառուցում» բյուջետային ֆինանսավորման ծրագրի հայտը: Համայնքի բյուջեից 120.0 հազար դրամ գումար հատկացվել է փորձաքննական եզրակացություն ձեռք բերելու համար, 540.0 հազար ՀՀ դրամ հատկացվել է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի համար և 300.0 հազար ՀՀ դրամ՝ տեխնիկական վերահսկողության համար: Համաձայն մրցույթի ծրագրի իրականացման արժեքը կազմել է 7900.0 հազար ՀՀ դրամ, որի 30%-ը հատկացրեց Հյասատանի Հանրապետության կառավարությունը, իսկ մնացած 70%-ը համայնքի միջոցներից: 2019թվականի սեպտեմբեր ամսին ավարտին է հասցվել համայնքի մշակույթի տան տանիքի վերակառուցման աշխատանքները:

- 2019թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարվել է «Մյասնիկյանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի եկրորդ մասնաշենքի 1-ին և 2-րդ հարկերի վերանորոգման աշխատանքներ դռների և պատուհանների փոխում, հատակի լամինապատում, պատերի վերանորոգման և հարդարման աշխատանքներ: Այդ աշխատանքների կատարման և մատուցվող ծառայությունների համար համայնքի բյուջեից հատկացվել է 3772.0 հազար ՀՀ դրամ: Համայնքի բյուջեից հատկացվել է 250,0 հազար դրամ և «Մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի խոհանոցի համար ձեռք է բերվել գույք/կահույք/: Առաջին դասարան հաճախող թվով 43 երեխաներին նվիրվել է դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ:
- Համայնքի բյուջեից հատկացվեց 940.0 հազար ՀՀ դրամ և զարնանը իրականացվեց ներհամայնքային ճանապարհների և դաշտամիջյան ճանապարհների ընթացիք նորոգման աշխատանքներ, որի շրջանակներում «Կոտայք ՃՇՇ» ՍՊ-ի կողմից կատարվեց փոսալցման և հարթեցման աշխատանքներ:

Համայնքի բյուջեից 950,0 հազար դրամ հատկացվել է ներհամայնքային ճանապարհների արտաքին լուսավորության համար և լուսավորության ցանցին է միացվել Գագարին, Իսակով, Բաբաջանյան, Թումանյան փողոցները, Խանջյան փողոցի շարունակությունը, Սևակի 1-ին նրբանցքը : Լուսավորվել է նաև համայնքի հուշարձանը:

- Համայնքի սկզբնամասում տեղադրվել է 2 հատ տեսախցիկներ, որի համար հատկացվել է 250.0 հազար դրամ.
- Համայնքի բյուջեից 700.0 հազար ՀՀ դրամ գումար է սրամադրվել և ձեռք է բերվել ջրատար խողովակներ դպրոցի տարածք ջրագիծ անցկացնելու համար, նախատեսված աշխատանքները ընթացքի մեջ է.
- 990.0 հազար ՀՀ դրամ գումար հատկացվել է համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կատարման համար, իսկ 1600.0 հազար ՀՀ դրամ կոյուղագծի մաքրման և կեղտաջրերի հեռացման համար. Աղբահանությունը համայնքում կատարվում է համայնքի միջոցների հաշվին, որի համար համայնքի բնակիչները վճարում են տեղական վճար՝ 100 դրամ:
- Համայնքի բյուջեից 100.0 հազար ՀՀ դրամ որպես նվիրատվություն հատկացվել է Արմավիրի մարզային փրկարարական ընկերությանը՝ վարչական շենքի վերանորոգման համար:
- Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի սեփականության տրանսպորտային միջոցների տեխնիկապես անսարք վիճակը և շահագործման աննպատակահարմարությունը, աճուրդային եղանակով վաճառվել է համայնքի շարժական գույքը՝ 2 լոտով և գնվել է նոր ծառայողական մեքենա՝ 3500.0 հազար դրամ գումարով.
- Համայնքի բյուջեից 200.0 հազար ՀՀ դրամ որպես նվիրատվություն հատկացվել է ART Բարեգործական ընկերությանը և «ՀԱՏՈՒՑՈՒՄ- 2019» ծրագրի շրջանակներում հանգստի է ուղարկվել համայնքի հաշմանդամ թվով 4 բնակիչներ:
- Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքում գործող սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը համայնքի բյուջեից 2710.0 հազար ՀՀ դրամ գումար որպես դրամական աջակցություն հատկացվել է հաշմանդամներին, հիվանդներին, սոցիալապես անապահով բնակիչներին՝ դեղորայքի, վիրահատության, թաղման ծախսերի, ապրուստի կարիքները հոգալու համար:

- Համայնքի բյուջեից 70.0հազար ՀՀ դրամ գումար է հատկացվել և համայնքի 1-ին կարգի հաշմանդամ բնակիչ՝ Մարգիս Սալումյանի համար ձեռք է բերվել հաշմանդամության սայլակ.
- 4190.0 հազար ՀՀ դրամ գումար է հատկացվել համայնքում սպորտային, մրցութային խաղեր կազմակերպելու, ինչպես նաև տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ անցկացնելու համար. Աանորի տոների կապակցությամբ զարդարվել է համայնքը, տեղադրվել եղևնի և թվով 400 երեխաների բաժանվել Ամանորի նվերներ՝ տոպրակների տեսքով.
- 2019թվականի ընթացքում գյուղատնտեսական տնտեսությունների գյուղ. մթերքների արտադրանքը կազմել է՝ ծիրան 328տ, դեղձ 250տ, 10տ հատապտուղ, 1530 տ խաղող, բազմամյա խոտաբույս 490 տ:
 Աջակցություն է ցուցաբերվել գյուղատնտեսության արտադրության վարկավորման գործընթացին, հողաշինության բնագավառում աշխատանքներ են տարվել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների հաստատման, հողամասերի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ:
 Աճուրդային կարգով օտարվել է 280քմ բնակավայրերի նշանակության հողամաս, 1.0հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատարածք:
 Աշխատանքներ է տարվել ապօրինի շինությունների հայտնաբերման և կանխարգելման ուղղությամբ: Տրվել է 1քանդման և 2հատ շինարարության թույլտվություն, օրինականացվել է թվով 2 ինքնակամ կառուցված շենք-շինություն:
 Համայնքում տարվել է առկա անասնազվաքանակի հաշվառման աշխատանքներ և հիվանդությունների կանխարգելման միջոցառումներ.
 Աշխատակազմի կողմից ուսումնասիրվել, պարզաբանվել և օրենքով սահմանված կարգով ընթացք է տրվել գյուղատնտեսության վերաբերյալ շուրջ 16 դիմումներ.
 Պետական աջակցությամբ համայնքում գյուղացիական տնտեսությունների է հատկացվել <<Սիլիստրա>> տեսակի պարարտանյութ.
 Համայնքի վարչական բյուջեի տարեկան գրքի ազատ մնացորդը կազմել է՝ 14.457.9 հազար դրամ, ֆոնդային բյուջեի մնացորդը՝ 5.399.5 հազար դրամ.
 Նշված գումարից 6895.0 հազար դրամը նախատեսվում է <<Ջրային տնտեսություն ԾԻԳ>> պետական հիմնարկին որպես ներդրում՝ ներտնտեսային ոռոգման ցանցի վերականգման շինարարական աշխատանքների համաֆինանսավորման ծրագրի իրականացման համար, իսկ մնացած գումարը նախատեսվում է Մյասնիկյան փողոցի ասֆալտեմենտե ծածկույթի վերակառուցման աշխատանքների իրականացման համար.

Բյուջեի կատարողականը

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ընդհանուր վարչական բյուջեն տարեկան կտրվածքով կատարվել է՝ 102.4 %-ով.
- 1) սեփական եկամուտների գծով՝ 111.6 %
- 2) հողի հարկի գծով՝ 105.3 %
- 3) գույքահարկի գծով՝ 132.4 %
- 4) Տեղական տուրքերի նվճարների գծով՝ 114.4 %-ով:
- 5) ոչ հարկային եկամուտների գծով՝ 98.2 %

2.Վարչական բյուջեի ծախսերը կատարվել է՝ 88.5 %-ով

1) տեղական ինքնակառավարում՝ 88.3 %

2) կրթություն և գիտություն՝ 97.9 %

3) սոցիալական ապահովություն՝ 90.3 %

4) մշակույթ, սպորտ և կրոն՝ 87.4 %

5) արտաքին լուսավորություն՝ 99.3 %

6) ճանապարհների վերանորոգում 99.4 %

3. Ֆոնդային բյուջեի ծախսերը կատարվել է՝ 85.0 %-ով.

Համայնքապետարանը աշխատավարձի և սոցիալական վճարների գծով պարտք չունի:

Համայնքում կատարված բազմաթիվ աշխատանքների, դեռևս կան չլուծված խնդիրներ:

Համայնքի հիմախնդիրներն են՝

1. Որոգման ցանցի խնդիր

2. Կոյուղու և ներհամայնքային ճանապարհների նորոգում

3. Համայնքի մշակույթի տան ընդհանուր վերանորոգում

4. համայնքի կենտրոնի կառուցում

Համայնքի ղեկավար

2020 թվականի փետրվարի 4
Է.Սյանիկյան



Տ.Բաղդասարյան